



**ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ
ՃՇՏՈՒՄ ՄԸ ԵՒ
ՏԱՄՆՉՈՐՍ
ՆԱՄԱԿՆԵՐ
ՆԱԶԱՐԵՐ
ՏԱՂԱՒԱՐԵԱՆԷՆ
ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻՆ**
(26 ՄԱՐՏ 1906—27 ՄԱՐՏ 1908)
ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb


Սպորտն կը հրապարակենք Եղեռնի նահապակ Նազարէթ Տաղաւարեանէն՝ (Սերաստրիա/Սվազ, 1862—Այաշ, 1915) Սրալիին բռնակալութեան զոհ Ջապէլ Եսայեանին (Պոլիս, 1878—Սիպերիա, 1943) հասցէագրուած 14 նամակներ³: Անոնց շահեկան բովանդակութիւնը լոյս կը սփռէ Ի. դարասկիզբին Տաղաւարեանի դէմ շարունակուող համիրեան հալածանքին⁴, որով ան կը սրիպոյի Պոլիսէն փախչելու միջոցներ մտածելու: Հիանդ ծեանալով, ան չորս ամիս կը մնայ Պոլսոյ Ֆրանսական Հիանդանոցը, մինչեւ կարելի կ'ըլլայ ֆրանսական դեսպանատան քաղցրութեամբ (մանտանդ պաշտօնատար Մ. Սիլիէռիի, որ անոր կը շնորհէ ֆրանսական անցագիրը), 28 Նոյեմբեր 1905ին փախչիլ Մարսէյ, 1 Յունուար 1906ին հասնիլ Աղեքսանդրիա, իսկ Փետրուարին հաստատուիլ Գահիրէ: Հոն կը լծուի իր մասնագիտական աշխատանքին, միաժամանակ՝ ազգային գործերու, կու տայ բանախօսութիւններ⁵ եւ կ'աջակցի արտասահմանի մէջ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մասնաճիւղերու հաստատման աշխատանքներուն:

Հրապարակուող նամակներուն մէջ կը պարզուին երեսակներ Տաղաւարեանի եւ ՀԲԸՄ հիմնադիր խումբը գլխատրող Պօղոս Նուպարի յարաբերութիւններէն⁶, Եգիպտոսի մէջ «յեղափոխական անուան տակ [գործող] խաչագողներ»էն, ներդառարձ կայ Արփիար Արփիարեանի սպանութեան, թուրք ազգականներու (Բիզա պէյ, իշխան Սապահէտրփին են.)⁷ հետ հայ մրատրականութեան յարաբերութիւններուն⁸, երուպական տրութիւններու՝ հայկական բարենորոգումներուն խնդրով վարած քաղաքականութեան, Եսայեանի Եգիպտոս այցելութեան, ներմրատրական հակասութիւններու են.: Հրապարակուող նամակները կը բացայայտեն Տաղաւարեանի լեզուին գրարարախառն շերտը, նաեւ ճաշակ մը կը հաղորդեն արեւելի գրական արեւմտահայերէնէն:

Ի ձեռի չունինք Եսայեանի պատասխան-նամակները, թէիւ հրապարակուող նամակները կը հաստատեն թէ Եսայեան պատասխանած է այս նա-

մակներուն 18 Մարտ, 4 Օգոստոս, 8 Նոյեմբեր 1906, Փետրուար, 6 եւ 26 Մարտ, 16 Ապրիլ, 9 եւ 18 Յուլիս, 2 Դեկտեմբեր 1907, 8 Յունուար 1908 թուակիրներով:

Հրատարակուող նամակներէն երկուքը ունին նաեւ այլ՝ մարտնագիտական շահեկանութիւն, քանի որ լոյս կը սփռեն պարտկումի հետեանքով հայ մարտնագիտութեան մէջ սխալ արձանագրուած փաստի մը վրայ¹⁰: Տաղաւարեան, սետով ճերմակի վրայ կը գրէ եսայեանին՝ 1905ի սկիզբները Լուսաբերի մէջ «Արծրունի» ծածկանունով իր սպորազգած յօդուածաշարքին մասին¹¹, որ «Կ. Պոլսոյ եւ Թուրքիոյ հայոց վիճակն կը նկարագրէր»: Խմբագրութիւնը յապատումներ կատարած ըլլալով, Տաղաւարեան զայն վերամշակելով, 1906ին իբրեւ գիրք - 500 օրինակ եւ 13x18սմ չափով - կը հրատարակէ «աստ», այսինքն Գահիրէ, թէեւ գիրքին վրան տպուած է «Փարիզ Հայկական Տպարան»: Տաղաւարեան գիրքը կը փափաքի որկել Փարիզ հաստատուած Եսայեանին, որ կատարէ անոր ցրումը՝ առանել հեռացնելով Տաղաւարեանի հեղինակութեան վերաբերող որեւէ կասկած:



Գիրքին կողքը եւ անուանաթերթը

Խնդրոյ առարկայ գիրքը՝ Հայք Ի Կ. Պոլիս, Քաններորդ Դարու Սկիզբը, իր 67 էջերուն մէջ կ'ընդգրկէ փաստերեք բաժին, հետեւեալ վերնագրերով.- «Սահմանադրութիւն եւ Երեսփոխանական Ժողով», «Վարչական Ժողովք եւ Խորհուրդք», «Յանձնաժողովք, Խնամակալութիւնք եւ Ընկերութիւնք», «Գաւառաց Ազգ. Գործերն», «Թաղական Խորհուրդք եւ Հոգաբարձութիւնք Վարժարանաց», «Վարժարանք», «Ուսուցիչք եւ Ուսուցչուհիք», «Ազգ. Մամուլ», «Բարեգործական Հաստատութիւնք», «Պատրիարքութիւն եւ Պատրիարքական Իշխանութիւն», «Օրմանեան Պատրիարքի Գործունէութեան Եղանակը», «Եկեղեցական Դասակարգն», «Աշխարհական Դասակարգն»: Հարկ է նշել հեղինակին քննական ու մանաւանդ քննադատական մօտե-

ցումը՝ պոլսահայ ընկերային, կազմակերպական, համայնքի կրօնական եւ աշխարհիկ հարցերը վարելու խնդիրներուն:

Ուստի, հարկ կը տեսնենք հայ մարտնչագէտներու ուշադրութեան յանձնել հետեւեալ ճշտումը.- **Հայք Ի Կ. Պոլիս, Քսաներորդ Դարու Սկիզբը գիրքը տպուած է Գահիրէ, հակառակ անոր վրայ գրուած «Փարիզ» տեղանունին, իսկ գիրքին Արժուոնի ծածկանունին տակ թաքնուած անձը ուրիշ մէկը չէ քան՝ Տոքթ. Նազարէթ Տաղաւարեանը:**

Հրատարակուող այս նամակները լաւ պահպանուած են. Տաղաւարեանի ձեռագիրը միջին դիւրընթեռնելիութիւն ունի: Նամակները գրուած են սեւ մելանով, զոյգ թերթերու վրայ: Նամակներուն բնօրինակները այսու պիտի յանձնենք Երեւանի Զարեցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին:

Ա.

Ի Գահիրէ, 26 Մարտ 1906
5 Rue Faggalah

Ազնուափայլ Տիկին Զ. Եսայեան

Ի Փարիզ

Գերազնիւ Բարեկամուհիս,

Կ. Պոլսէն մեկնելէս ի վեր քանիցս փորձեցի Ձեր մասին տեղեկութիւններ ստանալ, ու իմ լուրերն Ձեզ հաղորդել. դժուարին եւ գուցէ վտանգատուր ալ էր ուղղապէս գրել Ձեզ, ուստի առ այդ զայս միջնորդ ըրի եւ անուղակի ճանապարհներ ընտրեցի: Չգիտեմ թէ՛ լուրերս հասա՞ն Ձեզ, բայց վստահ եղէք թէ մինչ երէկ բան մը հնար չեղաւ իմանալ Ձեր մասին: Վերջապէս երէկ պատահմամբ տեղեկացայ Ձեր Փարիզ գտնուիլն ու հասցէն, ուստի եւ առանց ժամանակ կորսնցնելու կը գրեմ Ձեզ:

Շնորհակալութիւն նախ իմ հիւանդանոց գտնուած միջոցիս Ձեր պարբերական այցերուն համար, որոնցմով իմ այդ պաշարեալի տխուր օրերուն ամէնէն հաճելի ժամանցներն կու տայիք ինձ, ու պահ մը մոռցնել կու տայիք իմ վիճակիս դառնութիւնն:

Յուսալով թէ կը հետաքրքրուիք իմ ելիցս ու լուրերուս մասին՝ կը փութամ նախ համառօտակի ներկայացնել Ձեզ իմ պատմութիւնս: Գուշկած էիք գուցէ թէ՛ ես ՚ի Տրանսական Հիանդանոցին անելի քաղաքական հիւանդ մ'էի քան Ֆիզիքական. արդ՝ պաշարուած էի անդ դուրսէն ու հսկուած ներսէն՝ կեղծ հիւանդ լուտեսներէ: Չէի պարզեր վիճակս բարեկամացս զի անոնց իրողութիւնն ծանուցանելով՝ ոչ միայն պիտի գրկուէի անոնց մխիթարիչ այցերէն՝ այլեւ պատահակայութեամբ¹² պիտի վնասած ըլլայի անոնց ու ինձ: Ապաստանմանս առաջին օրերէն արդէն ֆրանս. հիւպատոսարանն խոստացած էր ինձ իւր պաշտպանութիւնն, եւ ապա դեսպանատունն ալ նոյնն ըրաւ:

Կամաւոր բանտարկութեանս չորս երկար ամիսներուն մէջ քանից[ս] փորձեցին զիս երկրէն դուրս հանել, ու առ այդ մինչեւ իսկ մասնաւորաց,

դեսպանատան նաւերն ու պահականաւերն տրամադրութեանս տակ դրուեցան՝ սակայն չյաջողեցան, զի ծրագիրներն չգիտեմք ինչպէս՝ միշտ կ'իմացուէին ոստիկանութեան կողմանէ, ու ըստ այդմ միջոցներ ձեռք կ'առնուէին: Վերջապէս քառամսեայ կամատոր բանտարկութենէս ետքն յաջողեցան՝ դեսպանական կառքով, թարգմաններով ու դաւազներով¹³, ի մի բան դեսպանական շքով զիս տարին ծովեզր, եւ անդ պահականաւի սպաներով շրջապատեալ Վօթոտի շոգեմակոյկով ֆրանսական նաւ մը նետուիլ՝ որ զիս տարաւ ի Մարսիլիա (28 Նոյ.) անտի Քասն, Նիս, Մօնաքօ, Ճէնովա քաղաքներն հանդիպելով հասայ Վենետիկ, անցայ Վիեննա, անցի Պուտաբշտ եւ վերջապէս Պելկրատի ճամբով գնացի 'ի Ֆիլիպէ՝ ուր կը գտնուէր ընտանիքս շուրջ մէկուկէս տարիներէ ի վեր: Քսան օրեր անդ մնալէ ետք ընտանեօք դարձանք 'ի Թրիէստէ (զի ի Պոլսոյ ջրերէն անցնիլս վտանգատոր համարուած էր դեսպանատան կողմանէ) եւ անտի ծովի ճամբով հասանք Աղեքսանդրիայ Յունուար 1ին: Ամիս մը եզիպտոսի միջավայրն ուսումնասիրելէ յետոյ հաստատուեցայ 'ի Գահիրէ, ուր այժմ կը գործեմ իբր բժիշկ: Ոստիկանութիւնն իմ 'ի Պէօլլիքտերէ ռուսահպատակի մը հաստատութեան մէջ պահել յաջողած 18 սնտուկ ինչքերուա հետքն գտնելով՝ արգիլած է անոնց ինձ դրկուիլն. եթէ չյաջողիմ զանոնք ազատել, կորուստս շատ մեծ պիտի ըլլայ¹⁴:

Մենք ամենքս առողջութեամբ լաւ ենք: Եզիպտոս շատ սուղ երկիր մ'է: Ամէն ինչ Փարիզի կրկին գինն է: Ապագայի համար յոյսեր ունիմ:

Արդ Ձեզ կը մնայ գրել ինձ Ձեր ելքն, Ձեր այժմու վիճակն, եւ միջավայրիդ կարեւորագոյն լուրերն:

Սպասելով Ձեր պատասխանագրոյն՝ խնդրեմ հաճիք ընդունիլ իմ յարգանքներն ու բարեւներն եւ մատուցանել զայն Ձեր կենաց ընկերոջ:

Ձերդ

Տոք. Ն. Տաղաարեան

Յ.Գ.- Հիանդանոցէն ինձ յղած են Ձեր այն երկտողն որով կը գանգատիք զՁեզ զիս տեսնել արգիլելուն: Այն ատեն արդէն մեկնած էի, սակայն չէին կրնար ըսել Ձեզ զայս: Ատոր համար հիւանդ է ըսած են:

Բ.

'ի Գահիրէ 10 Մայիս 1906

5 Rue Faggalah

Ազնուաւիայլ Տիկին Զ. Եսայեան

'ի Փարիզ

Գերազնիւ Բարեկամուհիս,

Ստացայ Ձեր Մարտ 18ի նամակն: Ուրախ եմ տեսնելով զՁեզ ազատ ու Ձեր արժէքն հասկացող ու գնահատող միջավայրի մը մէջ եւ մանաւանդ գոհ Ձեր վիճակէն: Քաղցր է ինձ յուսալ թէ՛ ներողամիտ կը գտնուիք իմ կամատոր բանտարկութեանս միջոցին Ձեզ՝ իմ ամէնէ աւելի հոգածու

նաաստիներու ընկերակցութեամբ ու պաշտպանութեամբ շոգենաւ կը տեղափոխուէ՛ր՝ այդ ազնիւ ֆրանսացին՝ իբր պահապան հրեշտակ, քարափին վրայ ման կու գայ եղբր իհարկին իր պաշտպանութիւնն եւ աջակցութիւնն նսփրելու համար...

Ասասիկ օտարական մը փրկչի դերն կատարեց, ու ցաւալի է ըսել թէ՛ գտնուեցան ոստիկանութենէ վարձուած հայ ողորմելիներ՝ որք իբր բարեկամ կամ Յուդայ այցելեցին զիս, ու տեղեկագրեցին վիճակիս մասին իրենց հասկացութեան համեմատ:

Այս չափով վերջ չգտաւ Մ. Սիլիէի ազնուութիւնը. ո՛չ[,] նա տուաւ ինձ ֆրանսական անցագիր որ ծառայեց ու պիտի ծառայէ երկար տարիներ, նա յանձնարարեց զիս Աղեքսանդրիոյ, եւ տեղւոյս ֆրանսական ներկայացուցիչներուն, ու անոնց պաշտպանութիւնն հայցեց, եւ որք օգտակար եղած են ու պիտի ըլլան միշտ ինձ: - Այս ամէնուն փոխարէն միայն զգուշ ոճով շնորհակալութիւն մը յայտնած եմ, իմա Ձեր ազատարարին, երկնչելով նամակա ձեռք անցնելէն: Բայց դուք որ այնպիսի երկիր մը կը գտնուիք ուրկէ դրկուած նամակներու մասին որեւէ կասկած չկայ, խնդրեմ որ Դուք Ձեր նկարագեղ գրչով գրէք իրեն թէ որչափ շնորհապարտ եմ եւ զգացեալ իր երախտեաց հանդէպ:

Ձեր բանաստեղծի վառ երեակայութեամբ ինձ դրուատիքներ կը հիւսէիք՝ զոր անելի Ձեր ազնուութեանն կը վերագրեմ՝ քան իմ իրական արժանեաց համապատասխան: Շնորհակալութիւն:

Ներեցէք որ հետաքրքրութիւնս գոհացնելու համար հարցնեմ թէ ի՞նչ եղաւ Ձեր ամուսնուն պատկերի գործն:

- Երկիցս Ռ. Ջարդարեանի¹⁵ միջոցաւ Ձեզ փորձած եմ հաղորդել իմ լուրերն ու Ձերիններն խնդրած, զորս չէք յիշատակեր: Գուցէ ընդունած չէք այդ գրերն:

- Գալով վիճակիս, աստ իբր սկսնակ բժիշկ բաւական լաւ կը գործեմ, ապագային վրայ անելի յոյս ունիմ: Իրաց բնական բերմամբ եւ անելի իմ առ այդ ունեցած մենանձնութեան հետեւանօք ազգային գործոց մէջ սկսած եմ մտնալ: Իցի՛ւ թէ կարենայի օգտակար ըլլալ:

Եգիպտոս անկարգներու եւ խռովարարներու երկիրն է, ազգային զգացումն մարած է շատերու մէջ: Յեղափոխական անուան տակ խաչագողներու երամ մը կայ:

Խնդրեմ գրեցէք Ձեր ու Ձեր ազնիւ ամուսնոյն գործոց ու զբաղմանց մասին: Քաղցր է ինձ յուսալ թէ առանց նկատի առնելու Կ. Պոլսոյ երբեմն գրչակներէ Ձեր ընդունած վիրատրանքն ի հարկին պիտի գործածէք Ձեր զօրատր գրիչն ինպաստ հայոցս եւ հայկական Սբ. Դատին:

Հաճեցէք խնդրեմ տիկին ընդունիլ խորին յարգանացս հաաստիքն եւ մատուցանել զայն Ձեր գերազնիւ ամուսնոյն: Փափագելով Ձեզ կարդալ մերթ,

Մնամ Ձերո՛ր՝

Տոք. Ն. Տաղաարեան

Յ.Գ. Ձեր մասին եղած քննադատութիւնը մէկ աղբիւրէ կու գան, մանեակներու եւ պրիսմակներու բանաստեղծուիլէն¹⁶ որ Ձեր ներկայութեան չկրնալով ուզածին պէս իր դառնութիւնն երեան բերել, այժմ վատօրէն Ձեր մեկնումէն վերջ վատորակ ու տափակ գրչակներու միջոցաւ կը թափէ իր թոյնն, սակայն վատահ եղէք թէ բոլոր կարող գրողներն ու դատողներն ճանչցած են Ձեր անժխտելի արժանիքն:

Նոյն

Յ.Գ.- Կ. Պոլսոյ մէջ իմ պահ դրած 18 սնտուկ ինչքերս՝ որք շուրջ 500 ոսկի կ'արժեն՝ անկարելի կ'ըլլայ ձեռք անց[ը]նել, զի կառավարութիւնն զայս կը հսկէ, եւ զայս իրենց թագստոցէն հանել հնար չէ:

Նոյն

Գ.

Ի Գահիրէ 18 Օգոստոս 1906

Ազնուափայլ Տիկին Զ. Եսայեան

Ի Փարիզ

Գերագնի Բարեկամուիս,

Ստացայ Օգոստոս 4ի գիրդ: Մեծ հաճոյք պատճառեց ինձ Հ.Բ.Ը. Միութեան մասին ցոյց տուած համակրանքնիդ: Գուցէ օր մը այդ պատուական նամակիդ մի մասն հրատարակուի: Ինչպէս կանոնագրութենէն տեղեկացած էք՝ կ'ուզուի հայաշատ քաղաքներու մէջ ունենալ մասնաճիւղեր որպէս եւ ՚ի Փարիզ. առ այդ գրուած է արդէն Ա. Էզնայեանի¹⁷. դեռ պատասխանած չէ, սակայն յուսամ թէ մինչ աշուն պիտի ունենամք անդ մի մասնաճիւղ, եւ կը սիրեմք որ Դուք անոր անդամներէն ըլլաք: Կը խնդրեմ Ձեզ որ գրով ու բանի ջատագով կարդաք Հ.Բ.Ը. Միութեան, եւ եթէ կարելի է նոյնիսկ մասնախումբի կազմութեան համար նպաստէք ու աջակցիք: Մեր հայերն գործելու համար պէտք ունին պատրաստուելու եւ լարուելու, Դուք առ այդ մեծ դեր կրնաք կատարել:

Դուք իբր գրող շատ անելի կարետոր դեր կրնաք կատարել ֆրանսական զգայնիկ ժողովուրդեան մէջ ՚ի նպաստ մեր դատին քան մեր շատ մը խելակորոյս յեղափոխականներն: Պէտք է ամէն բանէ առաջ մենք զմեզ ճանչցնեմք եւրոպացոց եւ սիրցնեմք, մինչդեռ մեր գործիչներու այժմու ընթացքն զմեզ հետզհետէ անելի ատելի կ'ընէ անոնց:

Եթէ ընտանեաց մը հոգն ու բռն չունենայի վրաս, գուցէ լաւ կ'ընէի այս ուղղութեամբ շրջուն գործունէութիւն մ'ընելով յեւրոպա եւ յԱմերիկայ:

Ըձակիր ժողովուրդներն շնորհիւ ֆրանսական միջամտութեան ու պաշտպանութեան կրցած են ձեռք բերել իրենց ազատութիւնն, մենք անոնցմէ սպասելու եմք մեր փրկութիւնն: Ռուս եւ գերման թշնամի են մեզ, Անգլիացիք պաղարիւն ու եսամու են, իտալացիք կարող չեն քաղաքական մեծ դեր մը կատարելու, ուստի կրկին կը մնան ֆրանսացիք, դիւրազգաց, բարի թէպէտ հեռի իրենց հինաուրց ասպետական յատկութիւններէն:

- Ուրախ եմ որ գոհ էք Ձեր վիճակէն, ու զաակդ գտած է իր առողջութիւնն, Դուք պարտիք խնամել զՁեզ ու եթէ հնարի մի քիչ ժամանակ ծովեզր մ'երթալ ու արեգակի լոգանքներ ընել: Կը մաղթեմ որ ամուսինդ միշտ առողջ մնայ եւ մայրդ ապաքինի:

- Մենք բաւական լաւ ենք. սակայն տաքերէն շատ կը նեղուինք: Աղջիկս երկու անգամ աչքի հիւանդութիւն ունեցաւ. վերջինն դեռ կատարելապէս անցած չէ: Այս տեղի կլիման շատ աննպաստ է փոքրերուն: Ես ֆրանսական հիւանդանոցէն վաստկած միսերս վրայ տուի, նիհարցայ: - Գործերս բաւական լաւ են:

Իմացաք գուցէ Օսմ. Կառավարութեան իմ դէմ հրատարակած վճիռն որ եթէ իրագործուի մեծապէս կը վնասուիմ:

Ջերմիւ ողջունելով զՁեզ եւ Ձեր ազնիւ ամուսինն եւս մնամ յարգանօք Ձերդ
Տոք. Ն. Տաղաւարեան

Գ.

Ի Գահիրէ 23 Նոյ. 1906

5 Rue Faggalah

Գերազնիւ Տիկին եւ Սիրելի Բարեկամուհիս,

Ստացայ Նոյ. 8ի նամակնիդ: Շատ ցաւեցայ հիւանդութեանդ մասին. ուրախ եմ որ անցուցած էք զայն: Կը հաւատամ թէ այս ծմեռուան եղանակն տաք երկրի մը մէջ անց[ը]նելն մեծապէս կրնայ նպաստել Ձեր առողջութեան: Եւ ի՞նչ հաճոյք ինձ համար որ ամիսներով պիտի կրնամ վայելել Ձեր ներկայութիւնն աստ եւ պիտի կրնամք խօսիլ իմ կամատր բանտարկութեան, եւ անցեալի ու ներկայի շատ մը խնդրոց մասին: Այս չափով չպիտի բաւականանամք, ո՛չ, այս տեղ մենք լսարան, թերթեր ու հանդէսներ ունիմք որոց վարիչներն պիտի ջանան օգտուիլ Ձեր ներկայութենէն: Մի վախէք, խնդրեմ, կը խոստանամ չթոյլատրել որ շատ յոգնեցնեն զՁեզ, սակայն Ձեր գրչէն ու հմտութենէն բաժին մը հանելու է անոնց:

- Արուեստագէտի մը համար Եգիպտոս այցելելն շատ հրահանգիչ է, ուստի եւ եթէ կարելի է Ձեր ամուսնոյն Ձեզ հետ ընկերակցութիւնն խորհուրդ պիտի տամ:

- Ֆրանսացիք արդարեւ ազնիւ են արեւմտեանց ազնուագոյնն, սակայն իրենց երկրին մէջ, անկէ դուրս spéculateurներ են, նման գերմանացոց եւ անգլիացոց. չգիտեմ ինչպէս բացատրել այս երեւոյթն. գուցէ լաւագոյններն մայր հայրենիքէն չեն հեռանար եւ կամ իրենց երկրէն դուրս ելնելուն՝ անդ կը թողուն իրենց բոլոր ազնուութիւնն ինչ եւ այդ տեղերու շահագործումն իբր իրենց նպատակ կ'ընտրեն... Դուք որ քաջ հոգեբան էք եւ լաւ կը ճանչնաք ֆրանսացիներն իրենց երկրին մէջ Ձեզ կը թողում զանոնք ուսումնասիրել աստ, բաղդատել ու Ձեր վճիռն արծակել:

- Հ.Բ.Ը. Միութեանն համար ճիւղ մը պիտի կազմուէր 'ի Փարիզ, առ այդ նամակ գրուած է Ա. Էգնայեանին եւ փաշան¹⁸ ինքն ալ տեղդ գտնուած

ատեն գործին մղում պիտի տար. անգամ մը լսեցինք թէ ձեռնարկ մ'եղած է եւ Ձեզ ալ գրեցի որ անոր յաջողութեանն ջանադիր ըլլաք, սակայն այլեւս ծայն չ'ելաւ: Մենք փափկանկատութեանն դէմ համարեցինք եղածին մասին փաշայէն տեղեկութիւն առնուլ, եւ կամ անոր գտնուած քաղաքին համար անկէ բաներ մ'լսել, ու խնդիրն այսպէս անորոշ ու անկերպարան մնաց: Յուսամ թէ քիչ օրէն փաշան կը վերադառնայ, ու անկէ այս մասին տեղեկանալէ ետք, տեղւոյդ համար ծրագիր մը կը գծեմք, եւ անոր յաջողութեանն նպաստելու համար Ձեզ կը գրեմք, եթէ մինչեւ այն ատեն Դուք աստ հասած չ'ըլլաք:

- Չգիտեմ թէ Միութեանն համար ինչպէս կրնամք օգտուիլ օտարներէն եւ մանաւանդ ֆրանսացի կանանց խաղաղութեան լիգուէն. անոնք թող ջանադիր ըլլան գոնէ մեզ ապրելու իրատունքն շնորհել տալ մեր մայրենի երկրին մէջ՝ եթէ չեն կրնար ազատագրել զմեզ կարմիր, արիւնկզակ Համիտի ճանկերէն...:

- Երոպացիք զմեզ ու մեր հարցն գործիք կ'ընեն իրենց շահերն յաջողցնելու համար...:

- Մենք ըստ բաւականի լաւ ենք. առողջութիւննիս բաւական գոհացուցիչ է: Վերջերս եղբայրս բերել տուի Փարիզէն, ու պիտի աշխատիմ որ այստեղ գործ մ'ունենայ:

Ձերմի եւ յարգանքօք կ'ողջունեմ զՁեզ եւ Ձեր ազնիւ ամուսինն, եւ տաքով համբոյրներ կը յղեմ Ձեր աղջնակին: Ձերդ

Տոք. Ն. Տաղաւարեան

Ե.

Ի Գահիրէ 21 Փետ. 1907

5 Rue Fagalla 5

Գերագնի Տիկին,

Վայրկենիս ստացայ Ձեր Մարսիլիայէն գրած երկտողն: Ուրախ եմ որ հանգիստ ճամբորդութեամբ Ֆրանսա հասած էք, ու այժմ Ձերիններուն քով կը գտնուիք:

- Կը ցաւիմ որ ըստ արժանւոյն եւ մեր փափագանաց չկրցինք հիւրընկալել զՁեզ, եւ իվերջոյ սրիկայի մը ընթացքն այնչափ վրդովեց զՁեզ: Ձեր մեկնումէն իվեր ոչինչ պատահեցաւ. այդ սրիկան երբեք չերեցաւ, գուցէ կոսահելով թէ իր ընթացքն կրնար իրեն համար վտանգաւոր ըլլալ՝ ու զգաստացաւ:

- Ձեր մեկնման առթիւ երկու անպատշաճ հրատարակութիւններ տեսնուեցան, մին "Լուսաբերի"¹⁹ մէջ՝ Արփիարի կողմանէ որ կ'ըսէր թէ «տիկին Եսայեան թէպէտ մտադիր էր քիչ մ'ես մնալ, սակայն անակնկալ պատճառաւ մը մեկնեցաւ», կամ ասոր պէս բան մը, իսկ միւսն "Ազատ Բեմի"²⁰ մէջ յորում Լ.Լ.²¹ կ'ըսէր թէ՝ տիկին Ձ. Եսայեան մեր աշխատակիցն է "Շահան"²² ծածկանուան տակ: Երկուքն ալ սրտնեղութիւն պատճառեցին ինձ եւ մերայնց:

- Կ'ըստի թէ այդ սրիկային ընկերներն իսկ զայն խստի յանդիմանած են, իր Ձեր հանդէպ բռնած ապօրէն ընթացից մասին: Այժմ ամէն ինչ մոռցուած է:

- Իմացայ թէ Ձեր եգիպտոսի տպաւորութիւններն պիտի գրէք եղեր. շատ փափաքելի է որ զայն "Լուսաբեր"ի մէջ հրատարակէք:

- Տեղւոյս "Լսարան" Ընթերցարանի կողմանէ հրատարակուելիք հատորի համար Ձեր խոստացած գրութիւն միշտ կը սպասեն:

- Մենք ամենքս լաւ ենք, զամբ այժմ Ձեզ եւ Ձերայնոց - ինչպէ՛ս են Ձեր ազնիւ ամուսինն, յարգելի քոյրն եւ սիրասուն աղջնակն, յուսամ թէ զանոնք լաւ գտաք, գուցէ փոքր ինչ դժգոհ զՁեզ օտարութեան մէջ ըստ արժանոյն չկարողանալ պաշտպանելու համար: Յուսամ թէ եթէ նկատի առնեն պարագաներն չեն մեղադրեր զմեզ:

- Յուսամ թէ պատրաստեալ նամակն դրկեցիք Աղեքսանդրիայէն, եւ մտադրած անձնաւորութիւններն կրցաք տեսնալ անդ: Կը փափաքիմ գիտնալ անոնց՝ իլոյր Ձեր պատմութեանց՝ կրած ազդեցութիւնն:

- Րիզա պէյի²³ հետ երկիցս տեսնուեցայ եւ երկար, այս յառաջիկայ Կիւրակէ երեկոյ մեր տունն պիտի հաւաքուինք. մի քանի բարեկամաց հետ՝ Րիզայի եւ իւր կուսակցութեան ծրագրին եւ գաղափարաց մասին խօսակցելու համար: Արդիւնաւոր են այս տեսութիւններն՝ սակայն գործնական արդիւնք չեն յուսար: Վերջն կը հաղորդեմ Ձեզ եզրակացութիւնս, եւ Դուք կ'իմացնէք ինձ Րիզայի կրած տպաւորութիւնն:

- Կը խնդրեմ որ ինձ իմացնէք հետեւեալ գրքերու հրատարակիչներն եւ անոնց իւրաքանչիւրի գինն ու հաւանական զեղջն:

1.- La Chabur considéré comme un mode de mouvement, par Lyndall²⁴

2.- L'unité des forces physique par le P. Secchi²⁵

3.- Evolution de la matière par le Bon.²⁶ կանխիկ շնորհակալութիւն:

- Հաճեցէք խնդրեմ ընդունիլ իմ եւ իմայնոց ջերմ բարեւներն ու յարգանքներն եւ ներփակեցէք զայնս Ձեր ազնիւ ամուսնոյն եւ քրոջն, տաքուկ համբոյրներ Ձեր աղջնակին..

Ձեր բոլոր տեղւոյս ծանօթներն Ձեզ կ'ողջունեն:

Միշտ Ձերդ
Տոք.Ն. Տաղաւարեան

Ձ.

Ի Գահիրէ 14 Մարտ 1907
5 Rue Faggalah

Գերազնիւ Տիկին,

Վայրկենիս ստացայ Ձեր Մարտ 6ի գիրն: Գոհ եմք որ հանգստութեամբ ճանապարհորդած էք, քաջառողջ էք ու լաւ գտած էք Ձերիներն: Մեր Ձեզ ըրածն պարտք մ'էր, տեղի չկայ շնորհակալութեան, կը ցափնք որ ըստ մեր փափագանաց չկրցինք հաճելի ընել Ձեր եգիպտոս այցն: Ծանօթ անձն անկէ իվեր տեսած չեմ: Յղեցի՞ք պատրաստուած նամակն

Աղեքսանդրիայէն, ու անդ տեսնուեցաք իր բարեկամներէն միոյն հետ որպէս խորհէիք ընել:

Շնորհակալութիւն Ձեր դրկած ցանկին համար: Անմիջապէս դրկեցէք Le Bonի Evolution de la matièreն եւ ապա "Lyndallի La Chabur considéré comme un mode de mouvement"ը: Իսկ P. Secchiի գործին համար ետքը կը գրեմ:

Շնորհակալութիւն ի մասին Հ.Բ.Ը.Միութեան տիար Յ. Իսկէտտէրի²⁷ հետ Ձեր ունեցած տեսակցութեան մասին: Փարիզի Միութեան գրած նամակն աստ հասաւ Ընդհանուր Միութեան կազմութեան ատեններն որ փաշային ուղղուած էր, ընդհուպ կանոնագրումներու թարգմանելով իրեն յանձնեցինք, խոստացաւ ինքն Փարիզ երթալուն անձամբ պատասխանել, ու մեկնեցաւ, Միութեան կազմութենէն մի քանի շաբաթ ետք, որով եւ նամակն ալ իր թով մնաց, չեմ կարծեր որ պահած ըլլայ: Ինչորեմ այս ամէն բացատրեցէք. այժմ մեր գործերն անելի կանոնաւոր են եւ որեւէ գրութիւն անպատասխանի չ[ի] մնար:

- Հ.Բ.Ը.Միութեան նպատակն՝ Փարիզի միութեան նպատակէն տարբեր է, մին միւսին լրացուցիչն է եւ տիար Իսկէտտէր միոյն եւ թէ միւսին հիմնադիր[ն]երէն կրնայ ըլլալ:

- Մասնաւոր նամակ պիտի գրեմ տիար Իսկէտտէրի: Առ այժմ իրեն յայտնեցէք իմ ամենախորին յարգանքս եւ ջերմագին բարեւներս:

- Միշտ կը սպասեմք Ձեր խոստացած գրութեան: "Լուսաբեր"ի վարչութիւնն իմ միջոցաւ կը խնդրէ որ Ձեր եզրակտոսի տպատրութիւններն իր թերթի միջոցաւ հրատարակէք:

- Ահմէտ Ռիզայի հետ մի քանի մասնաւոր տեսութիւններէ ետք տասը հատի չափ խորհող հայերու հետ երեկոյ մը մեր տունն հաւաքուեցանք ու երկար խօսեցանք: Մենք յարգելով Ահմէտ Ռիզան չէինք կրնար պաշտօնապէս իրեն յարիլ՝ ինչպէս կը փափագէր, զի նախ մենք պաշտօնական հանգամանք մը չունէինք, եւ թէ իրենք երիտասարդ թւորքերն բազմաթիւ կուսակցութեանց բաժնուած են, միոյն յարելով միասնորէ վշտացուցած պիտի ըլլամք, եւ թէ մեր վարդապետութիւններն տարբեր են իրենցինէն: Անոնք կ'ուզեն զմեզ քրիստոնեայ թւորքերու վերածել, մենք տարբեր կերպով կը խորհիմք: 40 դարու պատմութիւն ունեցող ազգ մը դիւրաւ չկրնար իր են, իր առանձին ազգութիւն կորսնցնել, սա ժառանգականութեան օրինաց հակառակ է...:

Սապահէտտինի²⁸ ծրագիրն մեզի անելի նպաստաւոր կը թուի. եթէ նա անկեղծ է մենք անելի անոր յարելու ենք. ի՞նչ կը կարծես այս մասին: Վերջապէս Ահմէտ Ռիզային առաջարկեցի Փարիզի մէջ Օսմանցի այլազան տեղերէ Congress մը կազմելու աշխատի. իցի՛ւ թէ կարելի ըլլայ եւ արդիւնաւոր:

Մերիններն ջերմի ու յարգանօք կ'ողջունեն զՁեզ եւ Ձերիններն, եւ համրոյնքը կը յղեն Ձեր աղջնակին: Անահիտն ու Մինուաշը կը համրութեն ամենքդ:

Յաւելորած 1907 Մարտ 14ի նամակիս²⁹

- 1905ի սկիզբներն Կ. Պոլսոյ եւ Թուրքիոյ հայոց վիճակն նկարագրած եմ: Այդ տեղեկագիրս հրատարակուած է տեղոյս "Լուսաբեր"ին մէջ Արծրունի ծածկանունան տակ. խմբագրութիւնն ինչ ինչ յապատումներ ըրած ըլլալուն զայն ամբողջութեամբ տետրակաւ մը հրատարակել տոփ աստ: "Լուսաբեր"ի վարչութենէն զատ ոչ ոք գիտէ թէ դա իմ գործն է եւ պէտք չէ որ գիտնայ: Տետրակին վրայ Հայկական Տպարան Փարիզու գրուած է. պէտք է կարծուի թէ՛ սա 'ի Փարիզ հրատարակեալ է, անկէ պէտք է դրկուի հայ թերթերու ու հանդէսներու, եւ Փարիզի մէջ ի վաճառ հանուի, եւ սա կարելի կրնայ ըլլալ Ձեր աջակցութեամբ:

Ներկայիս հետ թղթատարութեան կը յանձնեմ այդ տետրերէն 100 օրինակ (4 ծրարաւ) զորս ընդունելնոր ներկակ ցուցակի լրագրերու, հանդէսներու եւ անձանց կը յղէք մէկ մէկ օրինակ: Իրաքանչիւր օրինակի ետեւ կողքին վրայ գրելով սապէս. «Տետրակէս ուզողք բաւ է որ մեզ դրկեն 'ի Փարիզ Poste Restant A. B No 12 հասցէով կէս Ֆրանգ կամ համարժէք նամակադրոշմ»: Սա ոչ թէ վաճառմամբ շահ մ'ունենալու համար է, այլ հետաքրքրութիւն արթնցնելու եւ ինքնութիւնս ծածկելու համար: Եթէ քովիններդ հատնին ուրիշներ կը դրկեմ. 500 հատ տպել տուած եմ³⁰:

Գուցէ նախապատիւ կ'ըլլայ որ Մարտիլիոյ "Արմենիա"յի³¹ միջոցաւ ալ վաճառեմք, ի՞նչ կ'ըւէք:

Կը խնդրեմ որ անունս գաղտնի մնայ եւ եթէ հնար է նոյնիսկ Ձերիններէն:

- Այս տետրակներու մասին ըլլալիք ծախսերուն հաշիւն բռնեցէք, կը հաշուակցինք:

- Շնորհակալութիւն:

Ն.Տ.

Յ.Գ.- Յանկն յետ գործածութեան ինձ դրկելնիդ կը խնդրեմ:

Է.

Ի Գահիրէ 6 Ապրիլ 1907

5 Rue Faggalah

Ազնուաւիայլ Տիկին Տ. Ձ. Եսայեան

'ի Փարիզ

Գերագնի Բարեկամուիս,

Ստացայ Մարտ 26ի գիրդ, սակայն դեռ չհասաւ Le Bonի գործն: Յուսամ թէ "Արծրունի"ի ծրարներն դրկուած են տրուած հասցէներուն, յանելով անոնց կողքին վրայ գրուելիքն: Ըսէք խնդրեմ Ձեր կարծիքն այս տետրակի նկատմամբ:

Տիար Յ. Իսկէնտէրէ նամակ առի, կը ցափմ որ Հ.Բ.Ը.Միութեան համար տեղոյդ մէջ մասնաճիւղ մը կազմելու գործին զլուս կենալ կը մերժէ: Այս առաջարկն ըրի՛ նախ իր այդ գործին համար աշխատակցելու Ձեզ ըրած

խոստումէն քաջալերեալ, եւ երկրորդ Պօղոս փաշային առաջարկութեամբ: Աստիկ իրողութիւնն: Փաշային հետ մասնախումբերու կազմութեան համար գրուած միջանի նամակաց եւ մանաւանդ տիար Էզնայեանին դրկուածին անպատասխանի մնալու մասին խօսելով՝ ըսի թէ՛ իցի թէ տիար Յ. Իսկէնտէրի դրկէինք Փարիզի մասնաճիւղի համար գրուած նամակն. փաշան անմիջապէս խօսքս ընդհատելով ըսաւ, «այո՛» եւ զայն կը ճանչնամ, շատ ազգասէր ու ազնիւ մարդ է, ստէպ հայրս տեսնալ կու գար, ան մեր գործն կը տեսնար»: Այս խօսքերէն քաջալերուած ըսի թէ «կը թոյլատրէ՞ք որ մասնաճիւղի կազմութեան համար տիար Իսկէնտէրի գրենք անցեալ տարուան դրկածնուս նման», ըսաւ «այո, եւ անմիջապէս»: Ուստի եւ անցեալ տարուընէ ստորագրուելով մնացած միակ գիրն փաշային հաւանութեամբ իրեն դրկեցի:

- Այս խօսակցութեան ատեն ջանդգնեցայ Ձեր անունն առաջ բջել, մանաւանդ որ գոնէ անգամ մը իսկ դիտած չէր զՁեզ:

- Այս իրողութիւնն բացատրէ տիար Իսկէնտէրի, արդէն ես ալ պիտի գրեմ, ու համոզէ զայն որ գլոյս կանգնի այս գործին, եւ Ձեր ու մեր խումբերու աջակցութեամբ կազմէ Փարիզի մասնաճիւղն:

- Մենք ամենքս լաւ ենք: Քեզ պէս մերիններն Պուկկարիա կը մեկնին ցուցէ անկէ՛ Օր. Հարենց³² Փարիզ գայ:

Ահմէտ Բիզան ինձ նամակ մը գրած է, շատ փափուկ է դիրքս, պէտք է այնպիսի նրբութեամբ պատասխանել որ մեր վրայ որեւէ պատասխանատուութիւն չբերէ:

Յարգանքով ողջունելով զՁեզ եւ Ձերիններն մնամ Ձերդ

Տոք. Ն. Տաղաարեան

Ը.

Ի Գահիրէ 24 Ապրիլ 1907

5 Rue Faggalah

Ազնիւ Բարեկամուհիս,

Ստացայ ներկայիս 16 թուակիր գիրդ: Ընդունած եմ եւ Le Bonի գործն: Փոյթ չէ թէ միա ուզած գործերս չդրկէք կամ անելի ուշ հասնին ինձ, խնդրեմ սակայն որ Bibilothèque de Phil. Scientifiqueի շարքին Lucien Poincaréի³³ «La Physique Moderne sur Evolution» գործն ինձ դրկէք:

Շնորհակալութիւն Արծրունիի տետրերուն մասին ձեր ստանձնած ծանօթութեանց: Կը փափագիմ որ այդ հրատարակութիւնն ծաւալի որչափ հնար է. խոհեմութիւնն կը պահանջէ որ ես երբեք երեւան չ'ելնեմ, եւ բոլոր բեռն Դուք ստանձնէք, ուստի եւ Ձեզ կը մնայ թոյթատարութեան հանդիպիլ մերթ տեղեկանալու համար թէ՛ խնդրանք կայ եւ կամ որեւէ պատասխան եկած է:

Թերթերուն մէջ բան մը չտեսնուեցաւ ցարդ, "Լուսաբեր" ծանոյց միայն այդ տետրակի հրատարակութիւնն եւ ոչ այլ ինչ: Չգիտեմ ինչ ընել որ թերթերն փոքր ինչ խօսին անոր մասին. արդեօք կարելի չէ՞ որ

"Անահիտ"ին³⁴ մէջ անոր մասին առողջապէս բան մը գրել տաս: Լաւ կ'ըլլայ եւ կարծեմ որ 10-20 օրինակ մը Մարսիլիոյ "Արմենիա"ին դրկէք %25 զեղջ խոստանալով գուցէ դա խայծ մ'ըլլայ: Ես դրամական արդիւնք չեմ սպասեր՝ այլ ծաւալում:

- "Լուսաբեր"ի վարչութեան կը հաղորդեմ Ձեր իղծն եւ գոհացում կը տրուի Ձեզ. կը խորհիմ միայն որ դուք հաճիք մերթ թաներ մը գրել անդ՝ գոնէ կատողեցնելու համար Լ.Բ.Ն եւ իրեններն³⁵:

- Կը ցաւիմ որ Հ.Բ.Ը.Միութեան համար տեղւոյդ մէջ կազմուելիք մասնաճիւղի գործն այդչափ կը դժուարանայ: Կը յուսամ թէ տիար Յ. Իսկէնտէր իմ իրեն ուղղած վերջին նամակէս ազդուած է, եւ Ձեր կողմանէ փոքր ճիգ մը զայն ի գործունէութիւն պիտի մղէ: Առ այս Ձեր յուսատու լուրերուն կը սպասեմ:

- Վերջապէս Ահմէտ Ռիզային նամակին պատասխանեցի, բառերով, ուռուցիկ խօսքերով լեցուն անխմաստ գիր մը ուղղեցի. ուրիշ կերպով չէի կրնար ընել, թէ մի գուցէ այդ թողթս իրենց համակրական եւ կամ անելի հետեւելու պաշտօնական խոստում համարի: Տեսնալուդ իրենց վրայ ըրած ազդեցութիւնն տեղեկացիր ու ինձ հաղորդէ:

- Ահմէտ Ռիզան ընդունելու համար մեր տունն հաւաքատեղս էին Արփիար³⁶ (Հին Հնչակեան), Վ. Թէքէեան³⁷ (քաշուած Վերակազմեալ), Նաթանեան³⁸ (Արմենական), Տոք. Շամլեան³⁹ (Դրօշակեան), Ապահ⁴⁰, ատամ[նարով] Քէլէճեան⁴¹, Ճեպէճեան⁴² (նոր գործիչ Հնչակեաններ), Վ. Քիւրճեան⁴³ (պահպանողական): Բնականաբար կարծիքներն այլազան էին քաղաքավարութեան կեղեւով պատեալ... եւ կը զարմանամ որ Ահմէտ Ռիզան շատ գոհ մնացեր է մեր անգոյն խօսքերէն եւ խոսափողական պատասխաններէն:

- Մերիններն մեկնեցան, ես առանձինն մնացի ու կը ճգնիմ եւ կ'աշխատիմ[:]

Ձերմ բարեւներ եւ յարգանքներ Ձեզ, Ձեր ազնիւ ամուսնոյն եւ քրոջ: Ձերդ

Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ.- Ինդրեմ հաճեցէք Librairie Baillier et filsի հանդիպելով հարցնել թէ՛ իրենց հրատարակած Encyclopédie agricoleի շարքէն Agricultureի⁴⁴ հատորն ե՞րբ լոյս պիտի տեսնէ. անհամբեր կը սպասեմ:

Նոյն

Թ.

Ի Գահիրէ 31 Մայիս 1907

5 Rue Faggalah

Ազնուափայլ Տիկին Զ. Տ. Եսայեան

Ի Փարիզ

Ազնիւ Բարեկամուհիս,

Ձեզ յղած վերջին նամակացս պատասխաններն շատ ուշացան: Այդ գրերով խնդրած էի ի մէջ այլոց ինձ յղել օրինակ մը Bibliothèque de Philosophie Scientifiqueի հաւաքածոյէն Lucien Poincaréի “La Physique Moderne sur Evolution” անուն գործէն: Եւ հանդիպելով J.B. Bailliere et filsի գրավաճառանոցն, տեղեկանալ թէ իրենց հրատարակած Encyclopédie Agricoleի հաւաքածոյէն “Agriculture”ի վրայ խօսող հատորն հրատարակուած է թէ ո՛չ, եթէ այո՛, թող ընդփոյթ ինձ յղեն տրցակ մը որոյ արժէքն արդէն իրենց դրկած են, եւ եթէ չէ հրատարակուած՝ ե՛րբ լոյս կը տեսնէ:

Ներկայիս կը կրկնեմ առ այս խնդիրքս, եւ անհամբեր այդ հատորներն եւ կամ անոնց մասին տեղեկութեանց կը սպասեմ:

- Ձեր գրութիւններն կը կարդամ [անընթ. մէկ բառ] հանդէսներու մէջ, ինչպէս ըսած եմ՝ փափագելի է որ անոնցմէ երբեմն եւ տեսնուին “Լուսաբեր”ի մէջ:

- Տեղոյս “Լսարան Ընթերցատան” կողմանէ հրատարակելի գրական հատորի գործն մնացած է, զի բաական թուօք գրութիւններ չհասան:

- Հ.Բ.Ը.Միութիւնն օր քան զօր կը բարգաւաճի ու կը ծաւալի. ունիմք առայժմ 7000 եգ. ոսկի պահեստի գումար եւ ամսական 142 ոսկիի եկամուտ: Միամեայ տեղեկագիրն մամուլ տակ է, եւ քիչ ատենէն կ'ընդունիք:

- Ի՞նչ եղաւ այս խնդրոյն մասին Ձեր ջանից արդիւնքն: Գիտէք թէ տիար Յ. Իսկէնտէր իր յոգնած ըլլալը պատրուակելով կը մերժէ ստանձնել նախաձեռնութիւնն: Կը սիրէինք որ Դուք համակիրներու խումբ մը ստեղծած ըլլայիք եւ փաշային տեղդ գալուն գործին մղում մը տայիք: Փաշային գաւակն՝ Առաքել պէյ՝ խոստացած է Փարիզ հասնելուն առ այդ աշխատիլ, անշուշտ առանձին կարող չէ բան մ'ընել. եթէ համակիրներու խումբ մը գոյութիւն ունենար՝ անոնք կը ներկայանային եւ խնդիրն տարբեր ձեւ մը կ'առնէր: Մեր ընկերներէն Աղաթոն⁴⁵ պէյ եւ Անդրանիկեան⁴⁶ եւ Փարիզ պիտի գան եւ կ'ուզեն բաներ մ'ընել՝ սակայն առանց առաջնորդի հաւատք չ'ունիմ որ որեւէ յաջողութիւն մ'ունենան:

- Գիտէք թէ մերիւններն Ֆիլիպէ մեկնած են եւ Պալքաններու զովութիւններն կը վայելեն, իսկ ես աստ կը խորովիմ:

- Տեղոյս ծանօթ խառնակիչներն ամենայնիւ ընկճուած են, եւ դեռ ունին կրելիքներ:

- Բիզայ պէյ նամակաւ մը խնդրած էր որ աստ իրեն հետ բանակցող հայ երիտասարդաց խումբն իր խորհրդակցութեանց արդիւնքն իրեն հաղորդէ, այսինքն պաշտօնապէս իրեն յարի քաղաքավար նամակաւ մը փոխանցուի այդ առաջարկի մասին: Կ'երեայ թէ գոհ չէ մնացած, մանաւանդ թէ՛ իմացած է որ մտադիր եմ Սապահէտտինի կուսակցութեան յարիլ... այս վերջին գրոյն չպատասխանեցի, թող վստահ ըլլայ թէ՛ առայժմ որեւէ խումբի չեմ պատկանիր:

- Սպասելով Ձեր պատասխանագրոյն կամ եւ մնամ յարգանք Ձերդ
Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ. Ջերմագին բարեւ եւ յարգանք Ձեր ազնիւ ամուսնոյն:

Նոյն

Յ.Գ.- Գոհ պիտի թողուք զիս եթէ հաճիք գրել Ձեր գործոց եւ առողջական վիճակի մասին:

Նոյն

Ժ.

Ի Գահիրէ, 10 Յուլիս 1907
5 Rue Faggalah (Caire)

Ազնուափայլ Տիկին Տ. Ձ. Եսայեան

Ի Փարիզ

Ազնիւ Տիկին՛ն,

Շուրջ երկուփուկէս ամիսէ ի վեր Ձեզ ուղղած գիրերս անպատասխանի կը մնան: Չգիտեմ ինչի՞ վերագրել պատճառն:

Կը ցափմ որ Ձեզ ապսպրած 3 ֆրանկնոց գիրքն (Physique Moderne) չդրկեցիք ցարդ, եւ Agricultureի հրատարակութեան մասին լուր մը չտուիք: Այդ երկու գործերու նկատմամբ այսօր իսկ ուղղակի հրատարակչաց կը գրեմ: Ուստի այլեւ այդ ծանծրոյթէն զերծ կը մնաք:

Այս օրերս դրամական անձկութիւն ունենալուս շատ գոհ պիտի մնամ եթէ հաճիք Ձեզ տուած հինգ Անգլ. ոսկոյ գումարն ընդհուպ ինձ հասցնել, զեղչելով անշուշտ Ձեր l'Evolution de la Matièreի, եւ Արծրունիի տետրերու առաքման համար ըրած ծախսերն:

Բարեւներ Ձեզ եւ Ձեր ամուսնոյն

Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ.- Մի քանի թերթեր միայն ծանուցած են Արծրունիի տետրերն ընդունելին, արդեօ՞ք միաներ դեռ առած չեն:

Նոյն

ԺԱ.

Ի Գահիրէ, 1 Օգոստոս 1907
5 Rue Faggalah 5

Գերագնիւ Տիկին՛ն,

Ստացայ Յուլիս 9 եւ 18 թուականակիր գրերդ որպէս եւ առաջնոյն հետ ապսպրած գիրքս եւ ընդ երկրորդին 93 Ֆր.ի գումարն: Շնորհակալութիւն:

Վերջին նամակս սրտմտալից կը գտնէք, անշուշտ դա եղած չէ նպատակն, միայն գուցէ փոքր ինչ չոր ոճով գրած ըլլամ իբր հետեանք փոքրարժէք գրքի մը համար 2,5 ամսուան սպասման, եւ յուսամ թէ՛ Դուք զձեզ իմ տեղս ինքնադրելով կ'արդարացնէք զիս:

Mr. Cilliere⁴⁷ կարծեմ ցարդ բան մը գրած չէ տեղոյս հիպատոսին, զի այս խնդրոյ մասին Mr. De Reffyի գրած թուղթս անպատասխանի մնաց:

Նոր վէպիդ⁴⁸ մասին լսեցի, սակայն չտեսայ, կը շնորհատրեմ եւ ֆրանսերէնի վաղընդփոյթ տպագրումն կը մաղթեմ:

- Ռազմիկէն⁴⁹ զատ այլու բան մը չտեսայ Արծրունիի տետրին մասին: Կովկասի եւ Ամերիկայի հայ թերթերն ու հանդէսներն պէտք էր որ հետաքրքրուէին: Տեսնանք Անահիտ ի՞նչ կը գրէ:

- Աղաթոն պէյ Զուիցեբիա է եւ Անդրանիկեան աստ կը գտնուի: Պօղոս փաշան կարծեմ Փարիզ է դեռ:

Ընդգրոյս Ձեզ կը յղեմ Միութեան միամեայ տեղեկագրէն օրինակ մը: Ասկէ Անահիտին ալ ղրկուած է:

- Մերիններն գիտէն Ֆիլիպէ իջած են: Կինս, որ ջերմէ կը տառապէր սկսած է բարելաւիլ, փոքրերս լաւ են, ես տկար եմ:

Ձերմի ողջունելով զՁեզ եւ Ձերիններն մնամ յարգանօք

Տոք. Ն. Տաղաարեան

ԺԲ.

Ի Գահիրէ, 10 Դեկ. 1907

5 Rue Faggalah, Caire,

Ազնուափայլ Տիկին Տ. Զ. Եսայեան

ի Փարիզ

Ազնիւ Բարեկամուհիս,

Ստացայ Դեկ. 2ի գիրդ: Տեղեկացած էի արդէն Պօլիս դարձիդ, նախ կը յուսայի թէ շուտով կը դառնաք, սակայն տեսնալով թէ կ'ուշանաք՝ վերջերս գրեցի Ձեր ազնիւ ամուսնոյն կարգ մը տեղեկութիւններ խնդրեցի եւ մի քանի ապսպրանքներ ըրի: Յուսամ ընդունած է գիրս:

Ես Ձեր դէմ չեմ վշտացած եւ արդէն պատճառ մ'ալ չկար, միայն նամակացս պատասխանելու եւ յանձնարարութիւններն կատարելու մասին նէկլիժանսնիդ⁵⁰ մեղադրած էի: Տեղի չկայ առ այդ անդարդառնալու:

- Առողջութիւնս բաւական լաւ է: Կինս շուրջ երկու ամիսներէ իվեր դարձած է զաւակներովս: Վերջերս փոքրներս անհանգստութիւններ ունեցան, այժմ լաւ են:

- Օր. Հարենց Փարիզ կը գտնուի, հասցէն է 3 Rue Chartilly: Պատկերնիդ իրեն կը ծանուցանեմ այս օրերս:

- Օր. Միւհենտիզեան⁵¹ կը փափագէր զալ ծմեռ մը աստ Եգիպտոս անց[ը]նել. մոռցա՞ծ է իր մտադրութիւնն: Եթէ կարելի է յիշեցէք իրեն իմ կողմանէ այս հարցումս: Թող գայ:

- Լ.Լ. ամառն Կովկաս գնաց ու ապա Փարիզ, եւ կը յուսայի թէ տեսած կ'ըլլաք զինքն: Իր թերթն փակուեցաւ. գործ չունի, անշուշտ նորանոր չարութիւններ կը նիւթ:

- Գիտէք թէ ո՞վք են ՚ի Փարիզ այդ խմբակի համակիրներն, Չոպանեանէն զատ:

- Արզունեանի⁵² ու՞ր գտնուելուն մասին լուր ունի՞ք: Կ'ըսեն թէ Պոլիս է, թէպէտ ինձ անհաւատալի կը թօփ: Վերջերս Պոլիսէն

դրամապահանջական գրեր հասան աստ, որք անշուշտ այդ խմբի ճիւղէն են, եւ կամ ներկայացուցիչէն: Ա[ստուա]ծ շնորհք տայ:

- Արծրունիի տետրակին սփռումն անելի քան երբեք կարետր է, զի Օրմանեան Կաթողիկոսական քանտիտա⁵³ կը ներկայանայ, եւ իր յաջողութիւնն ապահովելու համար ամէն միջոցներ 'ի գործ կը դնէ:

- Կ'երեւի թէ այդ տետրերն Կովկաս հասած չեն: Վերջերս Կ. Բասմաջեան⁵⁴ այդ տետրերէն ինծմէ կը պահանջէր օրինակ մը դրկեցի, այն ալ ընդունած ըլլալու չէ: Ինչ որ է, կրցածնուդ չափ աշխատեցէք որ այդ տետրակներն սփռուին ժողովրդեան մէջ:

- Եթէ տեսնալու առիթ ունենաք Ալի Ռեզային, Չերագին⁵⁵ եւ Իսկէնտէրին յարգանքներս յիշեցէք:

- Ալի Ռեզան իր թերթէն միշտ կը դրկէ, շնորհակալ եմ. սակայն հայոց մասին շատ խայթող է:

- Յուսամ թէ Ձեր յառաջիկայ նամակաւ իսկ պիտի գրէք Կ. Պոլսոյ մէջ ըրածնիդ եւ անդ տեսածնիդ:

Ներողութիւն խնդրելով Ձեզ տուած [1 անընթ. բառ] համար, կը մատուցանեմ իմ եւ կնոջս ջերմագին յարգանքներն ու բարեւներն, եւ խնդրեմ որ զանոնք ներկայէք եւ Ձեր ազնիւ ամուսնոյն:

Ձերդ բարեացակամն Տոք. Ն. Տաղաւարեան
Յ.Գ.- Ընդ գրոյս թղթատարութեան կը յանձնեմ օրինակ մը այն բանախօսութենէն, զոր ըրի 'ի Լսարանս Ընթերցարանին Գահիրէի⁵⁶, Ձեր աստ գտնուած առեն:

Նոյն

ԺԳ.

'ի Գահիրէ, 27 Փետր., 1908
5 Rue Fagallah 5

Ազնուափայլ

Տիկին Չ. Տ. Եսայեան

'ի Փարիզ

Ազնիւ Տիկին',

Ժամանակին ստացայ Ձեր Յունուար 8 թուականակիր նամակն եւ դրկել տուած trousse⁵⁷, սակայն յաջորդ օրն ճամբայ հանել խոստացած գիրքն դեռ ընդունած չեմ: Այդ առողջապահական գործն ընդունելէ ետք պատասխանելու մտադրութեամբ ուշացուցի ցարդ իմ գիրս: Մի քանի օրեր առաջ ենթադրելով թէ եկած ու թղթատարատունն մնացած է, դիմումներ ըրի, սակայն արդիւնք չունեցաւ: Ուստի եթէ ցարդ դրկած չէք ճամբայ հանելնիդ կը խնդրեմ:

Օր. Միւսնտիզեան հոս է, երկու եօթնեակէն դէպ 'ի Կ. Պոլիս կը մեկնի, մտադիր չէ կողմդ գալու:

Պատիւ ունիմ ծանուցանել թէ՛ ամիսէ մ'իվեր աղջնակ մ'ես ունեցած եմ ու մայրն ու նորածինն քաջառողջ են:

Լսեցիք հաւանականաբար Արփիարի սպանման մասին: Եգիպտահայն առ այս խորապէս յուզուած է: Յաւալի է որ յեղափոխական նւիրական անուան տակ ծածկուած խումբեր փոխան հայուն ազատագրութեան ջանադիր ըլլալու՝ ազգին օգտակար անդամներն ու բարերարներն մէկիկ մէկիկ կը սպանեն: Ա[ստուայ]ծ շնորհ տայ:

Հաճեցէք խնդրեմ ընդունիլ իմ եւ կնոջս յարգանքներն ու բարեւներն եւ մատուցէք զայն Ձեր ազնիւ կողակցին:

Ձերդ

Տոք. Ն. Տաղաարեան

Յ.Գ.- Անշուշտ ի Կ. Պոլիս մեր բարեկամ հիպատոսն տեսաք. իմ մասին տեղեկութիւններ հարցու՞ց, եւ Դուք խնդիրքս պարզեցիք իրեն: Միշտ իր յանձնարարագրոյն կը սպասեմ:

Նոյն

ԺԴ.

'Ի Գահիրէ, 27 Մարտ, 1908

5 Rue Faggalah 5

Ազնուափայլ Տիկին Ջ. Եսայեան

'Ի Փարիզ

Ազնիւ Բարեկամուհիս,

Ձեր Յունուարի սկիզբներն գրած նամակին անմիջապէս պատասխանեցի, ու որչափ կը յիշեմ ծանուցի Colinի աշխատանոցէն Ձեր դրկել տուածի ստացումն, սակայն այդ նամակիդ յաջորդ օրն իսկ ճամբայ հանել խոստացած առողջապահութեան գործն չ'ընդունիլս ծանուցած էի, ու մինչեւ հիմա ալ առած չեմ: Ես միշտ յուսալով թէ ճամբան է ուղղապէս չեմ ապսպրեր: Անկէ վերջ քառթով մը խնդրած էի եւ յղեցինք la lutte contre les microbes, par le Dr. Etienne Burnet⁵⁸, Librairie Armand Colin Rue 5 Mézire 5⁵⁹ գիրքն որ կարծեմ 3 ֆր. է այդ գիրքն ալ ընդունած չեմ: Արդ՝ ենթադրելով թէ գուցէ տեղափոխութեան հետեւանօք նամակներս Ձեզ չեն հասնիր՝ որոշեցի ներկայ գիրս քենիիս միջոցաւ Ձեզ դրկել ու խնդրեմ գրեցէք ինձ թէ՛ ընդունած է՞ք նամակներս, պատասխանած է՞ք անոնց, դրկած է՞ք ուզած երկու գիրքերս: Եթէ այո՛ աստ խստիւ պահանջեմ, ու եթէ ո՛չ կամ հաճեցէք ընդհուպ ինձ հասցնել, եւ կամ եթէ ի վիճակի չէք՝ հոգ չէ՛ ըսէք քենիիս որ ինքն դրկէ: Կարծեմ այս երկու գիրքերս առ առաւելն 8 ֆ. ըլլալու են:

- Մենք բաւական լաւ եմք, կինս շատ լաւ յիշատակ մը պահած է Ձեր մասին, ու ինք կը յանձնարարէ Ձեզ բարեւել: Երկու ամիս առաջ աղջիկ զաւակ մ'ալ ունեցայ, Աստղիկ-Աշխէն անուանեցինք. շատ քաջառողջ է:

- Մեր ամէնուն առողջութիւնն լաւ է, ես միշտ գիշերներն թուղթեր կը մրոտեմ, որք գուցէ օր մը իրենց ընկերներու հետ մուկերու կեր ըլլան...:

- Ա. Արփիարի սպանման հետեանք յուզումներն դադարած չեն աստ ցարդ, եւ ընդհակառակն երթալով կը սաստկանայ, նոր բարդութիւններ երեան կ'ելնեն, ուր պիտի տանի զմեզ այս տոամին.....

Վերջերս կարմիր տետրակ մը ձեռքս հասաւ, յորում ի մէջ այլոց Չօպանեանի՝ Վահէ Արզուան խմբակի համակիր-աջակից, ու անդամակից ըլլալն կ'ապացուցուի. աչքերուս չհաւատացի, ու դեռ չեմ ուզեր հաւատալ, սակայն գոնէ առեւտրային ցաւալի իրողութիւն մը կը կարծուի... Ինչ է Ձեր կարծիքն առ այս: Այդ տետրակին մէջ եւ այլուր մի փարիզաբնակ Պարսամեան եւս կը յիշուի, ո՛վ է այդ անձն: Այս մասին կը փափագիմ Ձեր կարծիքն իմանալ: Գիտէք անշուշտ թէ՛ Լ.Լ. ասկէց հեռացած է ըստ ոմանց Ամերիկայ եւ ըստ այլոց Փարիզ կը գտնուի: Եթէ տեղդ ալ ըլլայ չեմ կարծեր որ թեզ այցելելու [1 անընթ. բառ] ունենայ:

- Կաթողիկոսական ընտրութեան հարցն ազգայինճիւղներն կը զբաղեցնէ: Օրմանեան իր հաւաքած գումարներն իր քանտիտայութիւն յաջողցնելու կը գործածէ: "Մշակ"⁶⁰ եւ "Հովիւ"⁶¹ հանդէսն Օրմանեանի⁶² թմբուկն կը զարնեն, բոլոր երիտասարդ առաջնորդներուն խոստացած է զիրենք եպիսկոպոս ձեռնադրել, ուստի եւ անոնք Օրմանեանի քուէ պիտի տան, ի մի բառ ամէն միջոց կը գործադրուի ժողովրդեան ձայնն կապտելու համար, այսուամենայնիւ յուսահատած չեմ եւ կարծեմ թէ վերջիվերջոյ, Իզմիրլեան⁶³ պիտի ընտրուի՝ եւ գուցէ վաւերացուի ալ:

- Գալով մեր Միութեան՝ եթէ այս ամառ կողմդ գամ պիտի փորձեմ մասնաճիւղն կազմել, եւ անշուշտ Ձեր աջակցութիւնն ալ ինձ օգտակար պիտի ըլլայ:

Իսկ Դուք ինչ կ'ընէք, ինչ ջուրի վրայ է Փարիզի միաներու "Մասիս" ակումբն: Կաթողիկոսական խնդրով կը պարապի՝ Փարիզու հայս:

Սպասելով Ձեր պատասխանագրոյն եմ եւ մնամ յարգանքօք Ձերդ.

Տոք. Ն. Տաղաարեան

Յ.Գ.- Կ. Պոլիս գտնուած ատենդ առիթ ունեցա՞ր տեսակցելու մեր բարեկամ հիպատոսին հետ: Խօսեցա՞ր իմ մասին: Իրեն յանձնարարագրոյն կը սպասեմ ցարդ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Գրող, ազգային-հասարակական գործիչ, քնագիտութիւն, ապա՝ բժշկութիւն ուսանած Ֆրանսա: Հիմնադիրն է հայերէն քնագիտական առաջին հանդէսին՝ *Գիտական Շարժումը* (1885-7): Ընտանիքը Սեբաստիայէն Պոլիս կը տեղափոխուի 1869ին, իսկ 1878ին իր Չարտրեան ազգանունը կը փոխէ Տաղաարեանի: 1908ին սահմանադրութեան հռչակումէն ետք կը վերադառնայ Պոլիս, կ'ընտրուի Սեբաստիոյ *մեպոս*: Հիմնադիրներէն է Իթթիլաֆ Կուսակցութեան (անլի մանրամասն տե՛ս՝ Յ.Յ. Տաղաարեան, *Ազգաբանութիւն Սեբաստիոյ Չարտրեան Գերդասպանի/ Genealogical Tree of the Chaderjian Clan of Sivas*, Նիւ Եորք, Տպ. Մշակ, Պէյրութ, 1957):

- ² Տաղաարեան Այաշէն տարուած է Հալէպ, ուրկէ Յունիս 10ին, Չօհրապի եւ Վարդգէսի հետ, դէպի Տիարպեքիր ճամփուն ընթացքին նահատակուած է:
- ³ Տաղաարեանէն այլ փունջ մը նամակներ տե՛ս՝ Միհրան Մինասեան, «Եօթը Անտիպ Նամակներ՝ ԲԺ. Նազարէթ Տաղաարեանէն Մկրտիչ Անդրանիկեանին (1908-1909)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հրդ. ԻԲ.*, Պէրյուզ, 2002, էջ 307-21:
- ⁴ Տաղաարեան բանտարկուած էր 1896ին (չորս ամիս) եւ 1900ին (15 օր): Երկրորդ բանտարկութիւնը կարճատեւ կ'ըլլայ, որովհետեւ Պոլսոյ ֆրանսական դեսպանատունը կ'առարկէ թէ ան Պոլսոյ Ֆրանսական Հիանդանոցին բժիշկն է: Յիրաւի, Տաղաարեան իբրեւ օժանդակ բժիշկ այնտեղ պաշտօնակոչուած էր 1897ին:
- ⁵ 12 Յունուար 1907ին, Տաղաարեանի՝ Գահիրէի Լսարան-Ընթերցատան մէջ տուած բանախօսութիւնը՝ «Մանրէք եւ Անոնց Շահատակութիւններն», նոյն տարին իսկ կը հրատարակուի 27 էջանի գրքոյկի ձեւով, իբրեւ «Գ. Հրատ. Լսարան Ընթերցատան Գահիրէի», Գահիրէի Արարատ տպարանէն: Այլ բանախօսութիւն մը՝ տրուած 18 Յուլիս 1908ին (դարձեալ Գահիրէի Լսարան-Ընթերցատան մէջ)՝ «Հայոց Կաթողիկոսութիւնն եւ Այժմու Կաթողիկոսի Ընտրութիւնն» վերնագրով, կը հրատարակուի 45 էջանի գրքոյկի ձեւով, իբրեւ «Դ. Հրատ. Լսարան Ընթերցատան Գահիրէի», Գահիրէի Կամպեթթա տպարանէն: Այս գրքոյկը կ'ունենայ նաեւ 22 էջանի այլ հրատարակութիւն մը, դարձեալ Գահիրէի մէջ, 1908ին, սակայն ասոր տպարանը կը մնայ անձանթօթ՝ *Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ 1888-2011. Մարտնագիտական Ցանկ*, կազմ.՝ Տոքթ. Սուրէն Պայրամեան, Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի Բօլ Քիլիտեան Հրատ. Ֆոնտ, Գահիրէ, Տպ. Նուպար, 2012, էջ 10-11):
- ⁶ Տաղաարեան ՀՐԸՄ հիմնադիր վարչութեան ատենադպիրն ու 1905-08 շրջանի ընդհանուր քարտուղարն էր:
- ⁷ Շեշտակիօրէն ուշագրաւ ու դիպուկ է Տաղաարեանի եզրայանգումը թուրք ազատականներուն՝ արեւմտահայութեան հանդէպ ունեցած ծրագրին: Ըստ իրեն «անոնք կ'իւզեն զմեզ քրիստոնեայ թուրքերու վերածել, մենք տարբեր կերպով կը խորհիմք: 40 դարու պատմութիւն ունեցող ազգ մը դիպուալ չկրնար իր եսն, իր առանձին ազգութիւնն կորսնցնել...» (տե՛ս՝ նամակ 2.):
- ⁸ Ուր Նիւր Թուրքիոյ՝ մէջ հայոց, թէ այլ փոքրամասնութիւններու եւ թուրքերու միջեւ յարաբերութիւնները, անոնք քաղաքական տեղի ու դերի, արդարութեան վերահաստատման եւ այլ ազգային թէ ներօսմանական խնդիրներ մտորումի թէ քննարկումներու նիւթ կը դառնան:
- ⁹ Ո՛չ Գոհար Ազնաուրեանի կազմած ու ծանօթագրած *Արեւմտահայ Գրողների Նամականի* (Գրական Ժառանգութիւն [մատենաշար], գիրք IV, ԵՊՀ Հրատ., Երեւան 1972), ո՛չ ալ Արփիկ Անտիսեանի կազմած եւ ծանօթագրած *Ջապէլ Եասայեան, Նամակներ* (Գրական Ժառանգութիւն [մատենաշար], [գիրք] 12, ԵՊՀ Հրատ., Երեւան 1977) հատորներուն մէջ հանդիպեցանք Տաղաարեանի ուղղուած որեւէ նամակի:
- ¹⁰ Պայրամեան չի յիշատակեր Տաղաարեանի այս գիրքը՝ իր *Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ 1888-2011. Մարտնագիտական Ցանկ* հատորին մէջ: Ով Ով է. *Հայերը* նոյնպէս չի յիշատակեր այս մասին (*Ով Ով է. Հայեր, Կենսագրական Հանրագիտարան, Հրդ. Երկրորդ*, գլխ. խմբ. Յ. Այվազեան, Հայկական

Հանրագիտարան Հրատ., Երեւան, 2007, էջ 562-63): Հայաստանի Ազգային Գրադարանի «Համահաւաք Գրացուցակ»ը ի յայտ բերու հատորին գոյութիւնը հինգ վայրերու մէջ՝ Մաշտոցի Մատենադարան (համար 3232, երկու օրինակ), Սարդարապատի Ազգագրութեան Թանգարան (թիւ 63.3(2Հ) / Ա-885, մէկ օրինակ), Հայաստանի Ազգային Գրադարան (թիւ 9(47.925) Ա-88, տաս օրինակ), Երեւանի Պետական Համալսարանի Գրադարան (թիւ 9(566) Ա-88, մէկ օրինակ (http://armunicat.nla.am/cgi-bin/koha/opac-search.pl?idx=&q=%D5%80%D5%A1%D5%B5%D6%84+%D4%BB+%D4%BF.+%D5%8A%D5%B8%D5%AC%D5%AB%D5%BD&branch_group_limit= նայուած՝ 21 Փետրուար 2019): Հայկազեան Համալսարանի Տէրեան Հայագիտական Գրադարանը ունի երկու օրինակ:

¹¹ Յօդուածաշարքը լոյս տեսած է 15 Յունիսէն 5 Սեպտեմբեր 1905ի թիւերուն մէջ (Արծրունի, «Ձեկոյց», Հայք ի Կ. Պոլիս Քսաներորդ Դարու Սկիզբը, Փարիզ, Հայկական Տպարան, էջ 3):

¹² Դժուարընթեռնելի բառ, գուցէ՝ տարակայութեամբ:

¹³ Բարապան:

¹⁴ Տաղաարեանի քնակարանը բազմիցս ենթարկուած էր խուզարկումներու: Անտեղեակ ենք այդ սնտուկներու ճակատագրէն: Ըստ կարգ մը տունալներու, «Տըքթըր Տաղաարեանի բոլոր ձեռագիրները...1936ին ՀՕԿի միջոցաւ դրկուած են Հայաստանի Պետական Թանգարան»: Մեր հարցումներուն՝ Հայաստանի Ազգային Արխիւի եւ ԳԱԹի պաշտօնատարներ հաաստեցին թէ այդ նիւթերը իրենց մօտ չեն գտնուիր: Այդուհանդերձ քաջատեղեակ աղբիւրներ կը պնդեն արխիւին Հայաստան ուղարկումը, ուստի եւ ակնկալելի է որ ան բացայայտուի, թէ՛ ոչնչացած չէ: Տաղաարեան բեղուն գրիչ էր եւ հակառակ իր հրատարակած բազմաթիւ երկերուն, ունէր նաեւ հայերէն եւ ֆրանսերէն անտիպ նիւթեր՝ թէ՛ դասագրքային (կենդանաբանութիւն, 'մետէորաբանութիւն') եւ թէ՛ ազգային («Մարդահամար Հայոց», «Ատանայի Եղեռնը», «Յանկ Ջարգացեալ Անձնատրութեանց Թըքահայոց ԺԹ. Դար», «Նախափորձ Պատմութեան Իմացական Ջարգացման Հայոց - Հին Օրերէն Մինչեւ 1875 - ԺԸ Դար») քնոյթի: Իդէպ, ան իր քարտերու հաւաքածոն նուիրած էր Պոլսոյ Ազգային Կեդրոնական Վարժարանին (*Տօքթ. Նաքարէթ Տաղաարեան Բնական Գիտութիւններու Յուցահանդէս/Dr. Nazartet Dagavaryan Doga Bilimler Sergisi, Ազգ. Կեդրոնական Վարժարան 125*, Պոլիս, [ա.տ.], 2012): Իսկ իր այրին, 19 Ապրիլ 1920ին, Հայ Բժշկական Միութեան միջոցաւ Տաղաարեանի բժշկական գիրքերը (թիւով 101 հատ) նուիրած է «Հայաստանի Բժշկական Մատենադարան»ին:

¹⁵ Ռուբէն Ջարդարեան (1874–1915), Եղեռնի նահատակ գրող, խմբագիր, հրապարակախօս, հիմնադիր Ազատամարտի թերթի:

¹⁶ Արդեօ՛ք Սիպիլը նկատի ունի:

¹⁷ Աթանիկ Էգնայեան (Փարիզ, 1925), Ադամանդի առաջնակարգ վաճառական («Էգնաեանի Կտակը», Հայաստանի Կոչնակ, 23 Հոկտ. 1926, էջ 1479):

¹⁸ Նկատի ունի ՀԲԸՄ հիմնադիրներու խումբը գլխատրող Պօղոս Նուպարը (1851–1930):

¹⁹ Ազգային, քաղաքական, անտեսական եւ գրական երկօրեայ լրագիր. հրատարակուած է 1904-08 շրջանին, խմբագիրներ եղած են Վահան Քիւրքեան,

Արփիար Արփիարեան, Վահան Թէքէեան, Երուանդ Սրմաքեշխանլեան: 1909ին միացած է *Արեփին* եւ դարձած *Լուսաբեր-Արե*:

²⁵ Գրական-քաղաքական շարաթաթերթ (1903-07): Լոյս տեսած է Աղեքսանդրիա, ապա տեղափոխուած Գահիրէ: Խմբագիրներ եղած են Երուանդ Օսեան, Մ. Կիրօնեան, Թէքէեան, Լեւոն Լարենց են.:

²¹ Կը թուի թէ Լ.Լ. (Լեւոն Լարենց [Քիրիշճեան], 1882–1915, բանաստեղծ, թարգմանիչ) առանձին չէր. անոր կը գործակցէր Լ.Ք. [Լեւոն Բաշալեան, (1868–1943)], գրող, հրապարակագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ, խմբագիր, Լոզանի Ազգային Պատուիրակութեան խորհրդական, որուն կ'ակնարկէ Տաղաւարեան՝ 24 Ապրիլ 1907ի իր նամակին մէջ:

²² Բախտիար Յովակիմեանի *Հայոց Ծածկանունների Բառարանին* (Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2005) մէջ չհանդիպեցանք այս տունային:

²³ Ահմէտ Ռիզա (1859–1930), երիտթուրք քաղաքական գործիչ եւ գաղափարախօս, ապրած եւ գործած է Փարիզ, բացի 1908-18 շրջանին, երբ եղած է Օսմանեան Կայսրութեան մեծլիսի նախագահ, իսկ 1914-18ին՝ գլխատուրած է երկրին ձերակուտական յանձնաժողովը:

²⁴ Ինքնութիւնը չկրցանք պարզել:

²⁵ Հայր Անճելօ Սեչի (1818–1878), իտալացի աստղագէտ:

²⁶ Հաւանաբար Շարլ-Մարի Կիւթաւ ԼըՊոն (1841–1931), ֆրանսացի գիտնական:

²⁷ Ինքնութիւնը չկրցանք պարզել:

²⁸ Իշխան Սապահէտօնի (1877–1948), թուրք քաղաքական գործիչ, երիտթուրք շարժումի հիմնադիրներէն, Օսմանեան Կայսրութեան ազատական վարչակառավարման գաղափարախօս:

²⁹ Տաղաւարեան առանձին թերթի վրայ գրած է «յանւրած»ը, որուն ետեւի էջին, վերը ուրիշ ձեռագիր մը գրած է. «47 օտար 7 տեղական»:

³⁰ Արծրունի, *Հայք ի Կ. Պոլիս: Քսաներորդ Դարու Սկիզբը*, Փարիզ, Հայկական Տպարան, 1906, 67 էջ:

³¹ Քաղաքական, գրական շարաթաթերթ՝ (1885-1923), լոյս տեսած է Մարսէլի մէջ խմբագրութեամբ Մկրտիչ Փորթուգալեանի:

³² Տաղաւարեան ամուսնացած էր Հարենց ընտանիքի դստեր հետ:

³³ Ֆրանսացի քնագէտ (1862–1920):

³⁴ *Անահիտ* (1898–1911, 1929–40, 1946–49), Արշակ Զօպանեանի հրատարակութեամբ եւ խմբագրութեամբ լոյս տեսած գրական-գեղարուեստական հանդէս: *Անահիտ* չի թուր արձագանգած ըլլալ գիրքին («*Անահիտի Մարտնագիտութիւն*, կազմ.՝ Անդրանիկ Զէթունցեան, Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութեան Մատենաշար, Ա., Արթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1998):

³⁵ Հաւանաբար կ'ակնարկէ Լեւոն Բաշալեանին եւ նախապէս յիշատակած 'բանաստեղծուիին':

³⁶ Արփիար Արփիարեան (1851–1908), գրող, հրապարակախօս, գրական քննադատ, խմբագիր, հասարակական գործիչ, երայրասպան գնդակի զոհ: Աւելի մանրամասն տե՛ս՝ Տիգրան Գէորգեան, «Գաղափարի Զուր» Արփիար Արփիարեան», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հ. Գ., Պէրոյօ, 2003, էջ 9-58. նաեւ՝ Ստեփան Շահապազ, *Արփիար Արփիարեան*, Պէրոյօ, Տպ. Ալթափրէ, 1987:

- 37 Բանաստեղծ, խմբագիր, հրապարակախօս, հասարակական գործիչ (1878–1945):
- 38 Միքայել Նաթանեան (1868–1954), բանասէր, թարգմանիչ, հասարակական գործիչ, 1920–40ականներուն Մ. Արեւելքի ՀԲԸՄ կրթական գործիչ:
- 39 Ինքնուրուի չկրցանք պարզել:
- 40 Ապահ Պետրոսեան (1872–1928), հնչակեան հայ յեղափոխական, ապա՝ անդամ Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան:
- 41 Ինքնուրուի չկրցանք պարզել:
- 42 Արդեօ՛ք Սարգիս Ճեպէճեան (1864–1920), յեղափոխական գործիչ, Հաճընի 1920ի ինքնապաշտպանութեան ուժերու հրամանատար:
- 43 Վահան Քիրքճեան (1863–1961), կրթական մշակ, մամուլի եւ կուսակցական գործիչ, անդամ Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան:
- 44 Տաղաարեան 1881ին ընդունուած էր Փարիզի Երկրագործական Բարձրագոյն Վարժարանը, ուրկէ 1883ին վկայուած էր իրրեւ երկրագործական ճարտարապետ, խորանալով ծառարուծութեան եւ այգեգործութեան մէջ:
- 45 Երուանդ Աղաթոն (1860–1935), գիտատնտես, մշակոյթի գործիչ, ՀԲԸՄ հիմնադիր-անդամ, առաջին վարչութեան փոխատենապետ:
- 46 Մկրտիչ Անդրանիկեան (1851–1939), ՀԲԸՄ հիմնադիրներէն, առաջին վարչութեան գանձապահ:
- 47 Նկատի ունի Պոլսոյ ֆրանսական դեսպանատան պաշտօնատարը:
- 48 Նկատի ունի Եսայեանի *Շնորհքով Մարդիկը* որ լոյս տեսած է այդ տարի:
- 49 Ազգային, գրական եւ քաղաքական կիսաշաքարթաթերթ (1905–9), լոյս տեսած է Ֆիլիփէ (Փլովտիս), խմբագրութեամբ Ռուբէն Զարդարեանի, ապա՝ Տաճատ Կամսարականի:
- 50 Անհոգութիւն, անտարբերութիւն:
- 51 Տպարանատէր Յովհաննէս Միսեմետիզեանի դու՛ստրը արդեօք:
- 52 Ալեքսան Արզունեան (1874–1933), յանդուգն յեղափոխական գործիչ, վերակազմեալ հնչակեան:
- 53 Թեկնածու: Վերոյիշեալ գիրքին մէջ, Տաղաարեան յստակ կը դարձնէ իր դժգոհութիւնը Պոլսոյ Մաղաքիա Օրմանեան պատրիարքին հանդէպ, թափանցիկ ակնարկութիւններ ալ ընելով Բ. Դոան հետ անոր յարաբերութիւններուն մասին:
- 54 Կարապետ Բասմաջեան (1864–1942), բանասէր, պատմաբան:
- 55 Մինաս Չերազ (1852–1929), գրող, հրապարակախօս, խմբագիր, իրրեւ քարտուղար ընկերակցած է 1878ի Պերլինի Վեհաժողովի հայկական պատուիրակութեան:
- 56 Տե՛ս՝ ծանօթ թիւ 5:
- 57 Գրչատուփ:
- 58 Էթէն Պիլոն (1873–1960), բնագէտ:
- 59 1870ին հիմնուած հրատարակչատուն:
- 60 *Մշակ* (1872–1921), գրական, քաղաքական լրագիր, լոյս տեսած է Թիֆլիս, զանազան պարբերականութեամբ: Զայն խմբագրած են Գրիգոր Արծրունի, Ալեքսանդր Քալանթար, Համբարձում Առաքելեան, Լէօ, Են.:

-
- ⁶¹ Ազգային-հասարակական, քաղաքական, գրական, հոգեւոր շարաթաթերթ, հրատարակուած Թիֆլիս՝ 1906-10, ապա անուանաւորիտուած (Հովիտ) շարունակած է հրատարակուիլ մինչեւ 1917, դարձեալ Թիֆլիս:
- ⁶² Մաղաքիա Օրմանեան (1841–1918), աստուածաբան, հայագէտ, պատմաբան, բանասէր, հրապարակախօս, Պոլսոյ հայոց պատրիարք (1896-1908):
- ⁶³ Մատթէոս Իզմիրլեան (1845–1910), հոգեւորական գործիչ, բանասէր, Պոլսոյ հայոց պատրիարք (1894-6) եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս (1908-9):

**A BIBLIOGRAPHIC CORRECTION AND FOURTEEN LETTERS FROM
NAZARETH DAGHAVARIAN TO ZABEL YESSAYAN
(MARCH 26, 1906–MARCH 27, 1908)
(Summary)**

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

A set of 14 letters written by the Armenian Genocide victim, scholar, activist and Ottoman Parliament member Dr. Nazareth Daghavarian to the renowned Armenian writer Zabel Yessayan are published here.

These letters shed light on contacts established between Turkish liberals and Armenian scholars of the time and their discourse, intra-Armenian scholarly conflicts, efforts for the propagation of the Armenian General Benevolent Union in France, details of Dr. Daghavarian's escape from Constantinople after being persecuted by the Ottoman authorities, etc.

The letters disclose a secret about a book supposedly published in France under the pseudonym "Ardzruni." In one of his letters to Yessayan, Daghavarian states that he wrote and published a book in Cairo (yet printed in it Paris as its place of printing). However, to avoid any persecution, he asked whether he could ship the books to her in order for her to disseminate them.



